

Այսպէս ընդ միշտ կը թողուի «Ընտանեկան» մոլորեցուցիչ հրէշը, և կը դադրի գոյութիւն ունենալէ, ինչպէս արդէն գոյութիւն չունէր մինչև Զբոյ դարու Ազատագրող ինքնապաշտարար սխալազերծ օրինակներուն մէջ, քանի որ կրպակսի հայերէնէ թարգմանուած յոյն օրինակին մէջ, և առ նշմարելով Հ. Սարգիսեան (Ազատ. էջ 335), զարմացած պատճառը կը հարցնէ, «յատուկ անունս Ընտանեկան կը պակսի (ի Յունարէն) չգիտեմ առ ի՞նչ»։ կը պակսի սա գերազանց պատճառով որ գոյութիւն չունէր Հայ բնագրին մէջ որպէսզի փոխարկուէր Յունարէնի։

Մանչեսթր

ԿԱՌՆԻԿ ՅԸՆՏՐԿԻՄԵՆ

ՅՈՒՇԵՐ ԱՐՄԱՇԻ ԶԵՌԱԳՐԵՐԷՆ

Զեռագրական ամէն ժողովածու մեր նախահայրերու հոգեկան արտադրութեանց ծաղկեփունջ մըն է և հայելի մը անոնց կեանքին ու գործունէութեան։ Ամէն Հայ որ կը հետաքրքրուի իր ազգին անցեալով և անոր քաղաքակրթութեամբ, ստիպուած է անգամ մը աչքէ անցնել մեր ձեռագրական ժողովածուները, ուր նա կը գտնէ ամենալուրջ և ամենագոյնաւոր արժանի նիւթերէն սկսեալ մինչև ամենազրուարճալի առակներ, ստացուածներ ու ժողովրդական երգեր։ Այս յօդուածին մէջ մենք կ'ուզենք պարզ ու անպաճոյճ ճաշակ մը տալ մեր ձեռագրական ժողովածուներու մասին վերոյիշեալ տեսակէտով։

Նախ բնենք թէ մեր խեղճ նախահայրերը ի՞նչ մեծ դժուարութիւններով ձեռագրեր կը գրէին և կամ մանուանդ զանոնք կը պահէին։ Ինչպէս յայտնի է՝ հին դարերուն մեջ թուղթի գործարաններ գոյութիւն չունէին, և մագաղաթ ու գրթի մը համար տրամագրելի թուղթ ունենալու համար հարստութիւն մը պէտք էր։ Այս է պատճառը որ գրիչ մը (սովորաբար հոգեւորական) ի վիճակի չէր իր ուզած գործը գրելու կամ արտագրելու, մինչև հարուստ աշխարհական մը կամ բարձրաստիճան հոգեւորական մը նիւթական անհրաժեշտ ծախքերը չհոգար։ Զեռագիրը այս-

պիսի դժուարութիւններով գրուելէն ետքը, մեր ազգին քաղաքական դարաւոր անապահովութեան հետեւանքով դժուար էր նաև զայն պահպանել, քանի որ օտար թշնամիներ չարունակ մեր երկիրը կ'արշաւէին և յափշտակած ձեռագրերը կ'ոչնչացնէին կամ աւարելով սուղ գինով կը ծախէին։ Հետաքրքրական է այս տեսակէտով հայ ազգին քաղաքական անապահովութիւնը պատկերացնող Արմաշի N^o 145 Աւետարանը, որ անգամ մը թշնամիներէն կը յափշտակուի 16^{րդ} դարուն ըսկիգրը և հայ Կէն մը Գուրգոյ անունով «հանեալ ի պարանոցէն Ղուլ մի ԳՌ. (3000) դահեկանի ետուր և ազատեաց զաւետարան»։ Ի՞նչ զոհողութիւն կ'ընէ մը համար... Զեռագիր աւետարան մը ազատելու նպատակով մանեակը զոհել։ Նոյն աւետարանը կը յափշտակուի երկրորդ անգամ 1578-ին «Ղղրալի» (պարսիկ) և «Խոնդարի» (թուրք) միջև ծագած պատերազմի մը միջոցին, և Հայերու վիճակը այնքան կը ծանրանայ «որ շատ օք երանի կուտային մեռելոց»։ Ահա այն ատեն զայն կ'ազատէ հաւանք մը, «Յիշեցէք զՏէր Վարդան որ նորա հրամանօք ազատեցաք Ս. Աւետարանս ի ձեռաց այլազգաց»։ Այս Աւետարանին ողբասկանը ասով ալ չի վերջանար։ 1733-ին «Եղեւ Շամախի (կովկաս) այս յափշտարանս... յինկեր էր գէրի, ի ձեռէն Լեզկոյն (Լեզկ) ազայտեց Ակէնցի (Ակն)»... Յակոբէն։ Այսքանը միմիայն մասնաւոր կերպով յիշատակուածներէն. կարելի է երեւակայել թէ որքան գրչագրեր կորած և որքան ուրիշներ երեցս գնուած են առանց յիշատակուելու...

Յայտն Հայոց հին իրաւական և ընկերային վիճակը շատ քիչ ուսումնասիրուած է։ Երբ մենք լսենք օրինակի համար թէ մեր հին հեթանոսական շրջանի թագաւորներու մահէն ետքը անոնց զերեզմանին վրայ անոնց սիրելի հարճերն ու կիները կը թաղէին սպաննելով զանոնք, կը կարծենք թէ Սկիւթացիներու և կամ Հօթէնթօցիներու մասին կը խօսին։ Այս ընկերային տեսակէտով շատ հետաքրքրական է Արմաշի ձեռագրերուն N^o 28-ը։ Այս ձեռագրին պարունակած կանոնագրքին համաձայն հին Հայոց մէջ ազնիւ մը 12 տարեկանին և մանչ մը 14 տարեկա-

նին արբուն կը համարուէր, և այս տարի-
քէն սկսեալ անոնք կրնային հաշիւ ընել և
հաշիւել: Հայր մը կրնար իր զաւակը ժա-
ռանգութենէ զրկել, անոր մահէն ետքը
ժառանգաւորի կ'ստանար հօր ունե-
ցածին 1/36-ը: Հին Հայերը ժառանգը և
ստրուկներն ունէին, որոնք շարժական այլ
գոյքերու պէս կրնային ծախուիլ: Տէրը
կրնար զանոնք մասնաւոր կտակով մը իր
ժառանգութեան բաժնեկից ընել, բայց
չէր կրնար զանոնք ազատել առանց իր
զաւակի քորեպիսկոպոսի արտօնութեան:

Եթէ կին մը ամուսնացած միջոցին իր
մարդուն 100 դահեկան բերէր, մարդն ալ
պարտաւոր էր անոր 100 դահեկան տալու:
Բայց եթէ այլը իր կինը արձակէր՝ պար-
տաւոր էր անոր բերած պոռոյզը (100 դա-
հեկանը) ետ տալու:

Կինը կրնար ամուսինէն բաժնուիլ, ե-
թէ ապացուցանէր որ ամուսինը զայն կը
ծնծէ անիրաւօրէն և կամ եթէ ան «կախար-
գութիւն, շնութիւն, գողութիւն» կը գործէ
և «կամ որ էած ի տուն իւր բող կամ մա-
նուկ, կամ գործեաց պղծութիւն հետն որ
ի ընտանեացն (կենդանի)»: Բնականաբար
գերուհիները կամ աղախիները չկան այս
հաշուին մէջ: Ասոնց համար կ'ըսուի «թէ
զնէ մարդ առ իւր ընկերն աղախին, իւր
վատական լիցի փոխարէն վաշխին և թէ
լիցի որդիք աղախնուցն, առաջին ստա-
ցողին են որդիք»: Այս տեսակէտով աղա-
խիները կրնան իրենց տէրերը փոխել,
բայց անոնց զաւակները կը պատկանին
միշտ առաջին տիրոջ, որ զանոնք կրնայ
միշտ ծախել:

Զաւակները չէին կրնար իրենց հօրը
հետ թատրոն երթալ, «որդիք ընդ հօր իւր-
եանց ո՛չ ունին մտանել ի թէատրոն»:

Հայաստանի մէջ ապրող օտարները
հայ քաղաքացիներու չատ մը իրաւունք-
ներէն զրկուած ինչ. այսպէս «Հրամա՛ն օ-
րէնքս զի որք գործակալք են Հոսմոսեցոց
և զթագաւորական զապառուսորութիւնն ու-
նիան յարքունիս, ո՛չ լինել ի նոցանէ հո-
գաբարձու ի վերայ ընչից որբոց և ո՛չ մը-
տանեն ի դատաւորան և տանն այլոց բանս»:
Անոնք դատարանի առջև վկայութիւն տա-
լու անգամ իրաւունք չունին: Գիտու-
թեամբ, ուսուցչութեամբ և բժշկութեամբ
գրադոյնները մեծ յարգանք կը վայելէին

և տուրքերէ ազատ էին, «Հրամա՛ն աւրէն-
քս վասն Բժշկաց և վասն Հագագեաց (=
ուսուցիչ) և վասն Կրթականաց բոց»,
որք են ի քաղաքս և ի գեաւդս աշա-
խէի Կրթաց և Կրթականաց և Կրթականաց
հարկէ կամ անգագեւէ կամ հարկանել, կամ
անգագեւ և իրաւացի է անեկ ի նոցանէ հո-
գաբարձու որբոց և ազատէ զնոսա նա-
մասս, զի բժիշկքն բժշկեն զմարմին և
վարդապետքն զհոգիս»: Ասիկց կը հետեւի
թէ մեր նախահայրերը ուսուցիչներուն ար-
ժէքը ապահովաբար մեզմէ անհամեմատ-
րէն աւելի լաւ կը գնահատէին:

Դաւաճաններու համար կ'ըսուի. «ըզ-
քաղաքատուրս և զբերդատուրս, եթէ յա-
ռաջ քան զչարն ի գլուխ հանել յայտնե-
ցին իրքն, մահու մատնեցին. իսկ եթէ
զնով գնեցէ զանձն իւր՝ փրկեցի, ապա
զաչան հանիցեն և զկին և զորդիսն յար-
քունիսն ծառա առցեն և զինքն յայլ աշ-
խարհ վարեցեն մերկ և անաչք: Ապա ե-
թէ զչարն ի գլուխ հանիցէ և ընդ ձեռամբ
ածիցին, անորոքմն սպանցի»:

Շատ հետաքրքրական են նաեւ քրիս-
տոնեաներու և «այլազգի»ներու (այլակրօն)
յարարերութեան վերաբերեալ օրէնքները,
«Եթէ քրիստոնեա այլազգի սպանանէ կա-
մաւ՝ զգին արեանն առցեն 122 զեկան և
եթէ տկամ՝ 61 զեկան»: Մինչդեռ եթէ
քրիստոնեայ մը ուրիշ քրիստոնեայ մը ըս-
պաննէ, վերոյիշեալ գումարին եռապատիկը
պէտք է վճարէ: Եթէ այլազգի մը քրիստոն-
եայ մը սպաննէ, մահուամբ կը պատժուի:

Պախմներու վայրագութեան տեսա-
կէտով հետաքրքրական է նաեւ N^o 38 կա-
նոնադրքին հետեւեալ հատուածը, «Եթէ
ոք ի մձդնէութեան գտցի կամ երէց կամ
սարկաւազ... ազուէս գրոյմ ի ճակատն զի-
ցի և ի տեղիս ճգնաւորաց յապաշխարու-
թիւն տացեն. ապա եթէ դարձեալ ի նմին
գտցի՝ զշիզան գերկոսին... կտրեցեն և ի
գողենոց տացեն»:

Յոյն և Ասորի գրականութիւններէն
հատրնաւոր գործեր թարգմանող մեր նախ-
նիքներէն ամէնէն զարգացածը, Դաւիթ
Անյաղթէն գատ, գուցէ անկից ալ աւելի
Գրէգոր Մօսէսէն է: Ահա թէ ի՞նչ կ'ըսէ
ան իր թարգմանական բեզուն գործու-
նէութեան մասին, «բազում մատեանս
գորս ո՛չ եմք գտեալ ի մեր լեզուս, չէլիս»

հասանալի Գլխավորի, զինքնէն պատճառներովն
և զփութիւն... բայց և դտեալ մեր իսկ ի հայ
լեզու գրեալ թարգմանչացն շէնք Աղանի-
քաթի, զոր Գաւիթ յիշատակէ... գրեալ եմ
և զԿաթիւնի և զԱրտիշտի Կոնստանտինի հայ լեզու,
բայց և զԵրեմիայի Կոնստանտինի սկսայ
թարգմանել և ի թէ տակաւին կամեցի տէր
երկարանալ մեզ ի կենցաղումս, բազում
հոգս յանձն կալեալ զմեացեալսն բոլոր Յու-
նաց և յԱսորոց թարգմանել ո՛չ դանդաղե-
ցայց...» (Տե՛ս Արմաշի N^o 41 ձեռագրի-
ր)։ Այսչափ բեղմնաւոր և զարդացած իշ-
խան զրազէտ մը սակայն չի կրնար իր բո-
ցավառ կիրքերը զսպել երբ խօսքը Թոն-
դրակեցիներու կամ Մանիքեցիներու (աղան-
դաւորներ) մասին է և ահա թէ իր անձը
ստորնացնող ինչ լուսւ կը գործածէ Թոն-
դրակեցի ներսէնի գէմ. «քաղ հրաշունչ,
քծնիդ աղուէս, յափշտակողդ գայլ, պա-
րարեալդ խոզ, ջորի աքացող, խիմն ար-
ջառ, դուարակ հարկանող, ուղտ ռխակալ,
վրնջող մօլի ի մատակս, զիշերայածու
զազան, գերեզմանակրկիտ բորենի, . . .
գէմք գաղանի քո թխասցի...»։ Մարդ
ակամայ կը տարուի խորհելու թէ մեր եր-
կրին լեռնային հանգամանքը մեր նկա-
րագրին մէջ կոչտութեան գիծ մը ներմու-
ծած է, զոր պէտք է սրբազրեւնք ամէն
գիւնով։

Խորենացիին շատ մը օտար յաղթանակ-
ներ և փառքեր Հայերուն վերագրելու մար-
մաջը հետեւողներ ունեցած է նաև մեր ա-
պագայ մատենագրութեան մէջ։ Այսպէս
Արմաշի N^o 54-ի համաձայն Գերմանացիք
(Ալաման) Հայերէն կը ծագին, «Յորժամ
զնացին (Տրդատ և Լուսաւորիչ) ի տես
թագաւորին Կոստանդիանոսի Հի. (70,000)
արամք... ի նոցանէ արգելեալք էին արք
հօրք և յաղթանդամք և անուանիք...
աւելիւ իսկ ի նոցանէ աճեցեալք և
զարգացեալք, որ կոչին Ալաման»։

Ինչպէս յայտնի է հին փիլիսոփայու-
թեան մաս կը կազմէր նաև երաժշտութիւ-
նը։ Յովհան Որոտնեցին, որ շատ մը խա-
զեր և եղանակներ յօրինած է (տես. Ար-
մաշի թիւ 7 ձեռագիրը) ուր կ'ըսուի. «Ի
սմանէ յոգնանկար նորազիծ տառք և և-
րաժշտական եղանակք» ունեցած է իբր
արժանաւոր հետեւող Յակոբ Ղրիմեցին,
որ խօսելով իր «Մեկնութիւն Տամարի»

գրքին մէջ իր ժամանակ գործածուած ե-
րաժշտական գործիքներու մասին կ'ըսէ.
«Քնարն որ ունի զտասն աղին ի լարս մե-
տաքսեայ և թէ աւելի որ է քառասուն
աղի ի թելըս պղնձի և շաշն» որ է եօթա-
նասուն լարի և թէ աւելի որ է հարիւր
աղի ի թելս պղնձի»։ Այս նուագարաննե-
րու յաշիւը «սուր, բութ, զիւ, բամբ» էին
և «աւելի սուր, երկար», եւաւելի
«թոյլ, պինդ», և յաշիւը «աւելի սուր, եւաւելի
թեւ»։ «Կէս ձայն, երկպատիկ, կիսաբոլոր,
մակեռակ, մակքառեակ»։ Ծաշակ մը տալու
համար թէ Հայերը ի՞նչ զազափար ունէին
իրենց լսած հին լեզուներու հնչականու-
թեան մասին, յիշենք Վարդանի Արարածոց
Գրքի Մեկնութենէն (տե՛ս. մեր Արմաշի
ձեռագրերու չուցակ N^o 167) հետեւեալ
հատուածք. «Փափուկ՝ Հիլլէնն, սաստիկ՝
Հոսմայեցին, սպառնական՝ Հոնին, աղա-
շական՝ Ասորին, պերճական՝ Պարսիկն, զե-
ղեցկազարդ՝ Աղուանն, ծաղրական՝ Մուսգն
(քուրդն), տափակախօս խափարական՝ եւ-
զիպտացին, ճճուողական՝ Հնդկին, համե-
զակ՝ Հայն»։

Վերջացնենք մեր յօդուածը, զոր
կարելի է անսահմանօրէն երկարել մեր
թիւ 62 (Արմաշի ձեռագրերու չուցակ)
տաղերու և ոտանաւորներու ժողովա-
ծուէն շէնք մասին գրուած հետեւեալ տա-
ղերով, որուն հեղինակը Աղեքսանդր կայ-
սեր և Եղիսարեթ թագուհիին նուիր-
ուած կարգ մը ուղերձ ոտանաւորներ
գրած է, «Արիազեղ կառք արեւու, ի մէջ
երկրի բոցաճեմէ, ոսկեճաճանչ նորին ճա-
ճանչ, ի հոգիս մեր փայլատակէ, լուսա-
փայլակ անոյշ գիւնի, ցօղ քաղցրութեան
տապոյ սրտի...»։ Նոյն հեղինակը խօսելով
Աղեքսանդր Բաւոյլի ի մասին, երբ Հայերը
զարձեալ ազատութեան յոյսեր կը տածէին
և սակայն վերջէն յուսաբեկ եղան, կ'ըսէ.
«Նոր արշալոյս մեզ երեւցար, ի կողմանէ
հիսիսոյ, սուր հաւատոյ լուսով վանեալ,
զխոր խաւար հարաւոյ»։ Խեղճ քանաստեղծ,
երանի թէ քաղաքականութեամբ չզրադէլի
և զիւրաբորբոք ոգևորութեանդ սե յոռե-
տեսութիւն չհետեւէր նոյն արագութեամբ։

Պէյրուք

Յ. ԹՕՓՃԵԱՆ